

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«Հնարավորությունների հարթակ» V դպրոցական գիտահետազոտական կոնֆերանսի

1. Ընդհանուր դրույթներ.

1.1. Մույն Դրույթները սահմանում են «Հնարավորությունների հարթակ» V դպրոցական գիտահետազոտական կոնֆերանսի (այսուհետ՝ Կոնֆերանս) կազմակերպման և անցկացման կարգը:

1.2. Կոնֆերանսը աշակերտների գիտահետազոտական և նախագծային աշխատանքների արդյունքների ներկայացման ձև է, որը կոչված է գիտական գիտելիքների տարածման ակտիվացմանը, աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը: Այն նպաստում է նրանց գիտական ստեղծագործական գործունեության և հետազոտական աշխատանքների ներգրավմանը մանկավարժների, բուհերի դասախոսների և այլ մասնագետների ղեկավարությամբ

1.3. Կոնֆերանսի աշխատանքային լեզուներն են հայերենը, ռուսերենը, անգլերենը:

1.4. Կոնֆերանսի անցկացման վայրն է. ՄՊՀ մասնաճյուղի Երիցյան վարժարան: Հասցե. ՀՀ, 0070 ք. Երևան, Վարդանանց փ, 17 շ:

2. ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կոնֆերանսի հիմնական նպատակը.

- պատանեկան գիտահետազոտական գործունեության ակտիվացումն ու տարածումը,
- սովորողների մոտիվացիայի բարձրացումը կրթական գործունեության նկատմամբ, գիտելիքների խորացումը գիտության այս կամ այն բնագավառում
- գիտահետազոտական աշխատանքի արդյունքների ներկայացում տարբեր եղանակներով . էլույթ, էլեկրոնային ցուցադրում, զեկույցի, պաստառ, տեսաֆիլմ և այլն

2.2. Կոնֆերանսի խնդիրները.

- նախագծային և գիտահետազոտական աշխատանքների հանդեպ հետաքրքրություն դրսևորող, օժտված սովորողների բացահայտումը, բազմակողմանի աջակցության ցուցաբերումը

- գիտական, բնապահպանական, իրավական, մշակութային, պատմական և տեղեկատվական կրթության և ինքնակրթության խթանում.

- աշխարհի պատկերի և հասարակական գործընթացների վերաբերյալ սովորողների քննադատական և գիտական ընկալման ձևավորում, որն արտացոլվում է մասնակիցների հետազոտություններում և նախագծերում.

- կրթական հիմնական ծրագրերի յուրացման ընթացքում նախագծային և գիտահետազոտական գործունեության արդյունքում սովորողների առարկայական, վերառարկայական, անձնային որակների բարելավում

- աշխատանքը պլանավորելու, կազմակերպելու, կատարելու, ներկայացնելու և պաշտպանելու հմտությունների և կարողությունների ձևավորում

-որոնողական, նախագծային և հետազոտական բնույթի խնդիրներ ինքնուրույն սահմանելու և լուծելու կարողություն:

3. ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ ԵՎ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԸ

3.1. Կոնֆերանսի կազմակերպիչը ՄՊՀ մասնաճյուղի Երիցյան վարժարան (այսուհետ՝ Վարժարան), Հայաստանի Հանրապետություն

3.2. Կոնֆերանսի մասնակիցները՝ հանրակրթական հաստատությունների 9-12-րդ դասարանների աշակերտներ: Հայաստանի մարզերից և այլ երկրներից դիմող աշակերտները կարող են մասնակցել հեռակա (այս դեպքում մասնակիցն ուղարկում է զեկույցի կամ ելույթի տեսագրությունը):

4. ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԱՆՑԿԱՅՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. Կոնֆերանսի հայտը պետք է լրացնել <https://forms.gle/nn4BvJLxmjRXhBaU7> հղումով կամ լրացնել Word ծրագրով (Հավելված №1), և մինչև 10.05.2023 ուղարկել cto@msu.am էլեկտրոնային փոստին, Կ. Կ. Սամվելյան;

4.2. Կարող են ներկայացվել ինչպես անհատական, այնպես էլ թիմային (մինչև 3 աշակերտ) աշխատանքներ:

4.3. Էլեկտրոնային նամակի թեմա բաժնում նշվում է ուսումնական հաստատության անվանումը և մասնախումբը:

4.4. Աշխատանքները պետք է ուղարկել կոնֆերանսի թեգիսների և զեկույցների ժողովածուում տպագրելու համար:

4.5. Նյութերի համար գրախոսականներ չեն գրվում:

4.7. Կոնֆերանսի մասնակցության եղանակներն են.

Ա) **Զեկույց** - (մինչև 10 րոպե):

Բ) **Պատաս** – չափսերը 80-120 սմ, որի վրա պատկերված են աշխատանքի կատարման փուլերը, արդյունքները, գրաֆիկներ, եզրակացություններ, օգտագործված ռեսուրսները: Անհրաժեշտության դեպքում կարող է ցուցադրվել նաև մոդել:

Գ) Զեկույցով ելույթի տեսանյութի ներկայացում:

5. ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՄԱՍՆԱԽՄԲԵՐԸ

5.1. Բնագիտություն

5.2. Տեղեկատվական հաղորդակցային տեխնոլոգիաներ (ՏՀՏ-ներ) և մաթեմատիկա

5.3. Հասարակագիտություն, պատմություն

5.4. Լեզվաբանություն (լեզուներ, գրականություն)

6. ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

6.1. Կոնֆերանսի անցկացման ժամկետը - 12.05. 2023 թ

6.2. Մասնակիցների գրանցում - 10:00-ից 22.04. 2022 թ

6.3. Լիազումար նիստ - 11:00 – 12:30

6.4. Ելույթներ մասնախմբերում - 13:00 – 15:30

6.5. Կոնֆերանսի արդյունքների ամփոփելում: Հավաստագրերի հանձնում – 16:00

7. ՊԱՀԱՆՁՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

Բոլոր մասնախմբերում ներկայացված աշխատանքների առանձնահատկությունները պետք է լինեն.

- գիտական բնույթը (ներկայացված նյութերի համակարգում, վերլուծում և ընդհանրացում, պնդումների հիմնավորում, գործնական արդյունավետություն),

- ինքնատիպություն (խնդրի լուծման ոչ ստանդարտ, ոչ ավանդական, ոչ ֆորմալ մոտեցման ցուցադրում, նախագծի թեմայի պարզաբանում)

- նորարարություն (ծրագրի թեմայի շուրջ կատարված այլ հետազոտությունների համատեքստում. հետազոտության նոր օբյեկտ, առաջին անգամ քննարկվող խնդիր, հայտնի խնդրի նոր ձևակերպում, դրա լուծման նոր մեթոդ, հայտնի լուծման կամ մեթոդի նոր կիրառում)

- ստեղծագործական ներուժի մակարդակը (նոր մոդելների մշակում, գաղափարների, մեթոդիկաների ձևավորում)

- տեխնիկական լուծման ֆունկցիոնալությունն ու գեղեցկությունը (նախագծի արդյունքները, տեխնիկական լուծումը պետք է համապատասխանեն դրված խնդրին)

-գեղագիտական (աշխատանքի ձևավորումը պետք է լինի կոկիկ, ճշգրիտ):

9.3. Կոնֆերանսի ներկայացված նյութերը կարող են պարունակել.

- գիտահետազոտական աշխատանքի կամ նախագծի Power Point ծրագրով էլեկտրոնային շնորհանդեսը

-գեկույցը պետք է պարունակի A4 ձևաչափի մինչև 10 էջ էլեկտրոնային տարբերակով, ներառյալ գրականության ցանկը

- տեսանյութին կիրառման դեպքում պետք է նշված լինի դրա աղբյուրը,

- օգտագործված գրականության ցանկը

- Ձեկույցի, հոդվածի ձևավորման կանոնները.

- լուսանցքները. ձախը՝ 3 սմ, վերևինը, ներքևինը և աջը՝ 2սմ,

- տառատեսակը՝ Sylfaen,

- տառերի չափսը՝ 14,

- հեռավորությունը տողերի միջև՝ 1,15,

- հավասարեցումն ըստ լուսանցքների,

- պարբերությունը՝ 1.25 սմ:

- Տեքստի դասավորությունը (կառուցվածքը)

- վերևի աջ անկյունում Կոնֆորանսի խորհրդանիշը

- հեղինակի ազգանունը, անունը հայրանունը (մզացրած և կենտրոնով դասավորված)

- տեղեկություններ հեղինակի մասին (ուսման վայրը, դասարանը)

- հոդվածի վերնագիրը (մեծատառերով, մզացրած և կենտրոնով դասավորված)

10.3. Կոնֆերանսի մասնակիցները իրավունք են տալիս Կազմկոմիտեին.

- օգտագործել կոնֆերանսի ընթացքում ստացված լուսանկարները և տեսանյութերը, այդ թվում դրանց օգտագործումը համացանցում Կոնֆերանսի պաշտոնական էջում,

-փոխանցել Կոնֆերանսի վստահված անձանց հրապարակման համար,

-օգտագործել Կենֆեանսի շնորհանդեսներում որպես ցուցադրական նյութ,

- նյութերի պահպանումը, ձայնագրումը, համակարգումը, ճշգրտումը (նորացում, փոփոխություններ), օգտագործումը, տարածումը:

Սույն իրավունքն ամրագրվում է Հնարավորությունների հարթակ» III դպրոցական գիտահետազոտական կոնֆերանսի սույն Կանոնակարգով Կոնֆերանսի մասնակիցների և նրանց ծնողների համաձայնությամբ:

11. Պարզևատրում

Կոնֆերանսի բոլոր մասնակիցները ստանում են մասնակցության վկայական:

Հատուկ դեպքերում կարող են սահմանվել վկայականներ հատուկ անվանակարգերով:

Տեղեկությունները Կոնֆերանսի, նրա իրականացման, արդյունքների մասին, ինչպես նաև մասնակիցների աշխատանքները կներկայացվեն Վարժարանի կայքի «Բմ հետազոտությունը» էջում հղմամբ <http://school.msu.am/> → «Проекты гимназии» → «Исследовательская конференция»

Հավելված № 1. «Հնարավորությունների հարթակ» V դպրոցական գիտահետազոտական կոնֆերանսի մասնակցության հայտի ձև:

Ուսումնական հաստատության ամբողջական անվանումը, ղեկավարի ԱԱՀ, հեռախոսի համար, e-mail	Նախագծի հեղինակի/հեղինակների ԱԱՀ, տարիքը, դասարանը, հեռախոսի համար, e-mail	Նախագծի ղեկավարի ԱԱՀ, պաշտոնը, հեռախոսի համար, e-mail	Նախագծի թեման, Կոնֆերանսի մասնախումբը
---	--	---	---------------------------------------